



Յ. ԲՈՌՉԱՆՅԱՆ

(Հոգևոր մեմարտնութասախոս)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՂՐԴ Զ.Ի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

(Ճառ սպո սեղանի շուրջ)

Երեմիա մարգարեի հետ ևս էլ նմ ող-
բում՝ «Սուր առին ճանապարհը Սիրոնի...»:
Արդարեւ, սուր առին հայկական Սիրոնի՝ էջ-
միածնի ճանապարհները: Ու գալիս են
հազարավոր սգակիր մարդիկ, վշտի թախ-
ծոտ ղեմքերով, գալիս են մոտ թե հեռու
վայրերից, աշխարհի բոլոր անկյուններից,
գալիս են եկեղեցական թե աշխարհական,
մտախոն՝ և տրտում, գալիս՝ շրջապատե-
լու Մեծ Հայրապետի դագաղը, մամնակցե-
լու համազգային այս մեծ սգի հանդեսին.
Ճ՝ որ այլևս հավիտյան պիտի չուսննեն
նրա շնորհալի դեմքը, որովհետև «Գնաց
մարդն ի տուն իւր յափիտենից»:

Ամբողջ հայ ժողովորդը հոգվեց իր փ-
մաստոմ Հոր և պատվական, անզուգական
Հայրապետի անդարմանելի կորստի առ-
թիվ: Եվ Ս. էջմիածնի փութաց հայ ժողո-
վորդը՝ իր սիրելի Հայրապետին Քրածեշտ
տալու:

Վախճանվեց մեր Հայրապետներից ամե-
նախմաստոմներից և աշխարհի ամենագե-
ղեցիկ հոգի ոմեցող կրոնապետներից մեկը:
Գեղեցկությունը բարին է, իսկ բարին կապ-
ված է խղճի հետ: Եվ հանգուցյալ Վեհափառ
Հայրապետը մարմնացած քրիստոնեական
խեղճ էր, այդ բառի ամենասուրբ իմաստով:
Նա խղճով ապրեց և խղճով բարի հիշատակ
թողեց իր ետին, իրեն ճանաշողների սրտե-
րում: «Մենք, հայերս որքա՞ն պարտական
ենք Սովետական Կառավարությանը, որ մեզ
ազգութիւն փրկեց, ի խղճի պետք է իրախտա-
գետ լինենք: Ես մի ցանկություն ունեմ—
ամբողջ հայերը հավաքել մեր հողի վրա»,—
ասում էր Կրչանկահիշատակ Հայրապետը:
Հայրենասիրության մարմնացումն էր նա:
Հայրենիք և եկեղեցի, Հայաստան և Ս.

էջմիածնին՝ նրա ազնվական հոգու մշտավառ
ներկու կանթեղներն էին, որոնց ջերմությամբ
և լուսով ապրեց ու գործեց նա ավելի
քան վաթսով տարի: Մի երջանիկ օր, երբ
Վեհափառն ինձ ծեմարանի կունի դասա-
խոս և վերակացու ընտրեց, ասաց. «Միրի՛ր
և սիրեցը՛ ուսանողներին, որպես քո հա-
րազատ որդիներին, Հայրենիքն ու Հայ եկե-
ղեցին և զանա՛ միշտ նրանց հոգուն վառ
պահել Հայրենիքի սերն ու հայ հավատի
նկիրական հոգը, որոնցով ապրել և ստեղ-
ծագործել է մեր տաղանդավոր ժողովուր-
դը»:

Հանգուցյալի ո՞ր մեկ առաքինության
մասին խոսեմ, մի հարուստ գանձ էր նա,
պանձ անհատնում հայրենասիրության, եկե-
ղեցասիրության, ժողովրդասիրության, մար-
դասիրության և խաղաղասիրության: Որ-
քա՞ն հմուտ մանկավարժ էր Վեհափառը, և
որքա՞ն ուրախանում էր, քննության ժա-
մանակ տևանողների հաշողությունները
տեսնելով: Միշտ անմեղ ժափտ կար այդ
մեծ մարդու դեմքին, կարծես թե նեղանալ
չկար նրա համար: Գալիս էր նա Հովհոր
ծեմարանի բոլոր հանդեսներին և ոչի-ոչով
ունկնդրում: Մերունի Հայրապետի համար
հոգնիլ չկար, որքա՞ն սեր, որքա՞ն եռանդ
ուներ: Ցանկապատել տվեց իր այգին,
տոնները տնկել տվեց, բայց ավա՞ղ, իր ծա-
ռերի պտուղները չկարողացավ վայելել: Այս
կարծ և վաղանցով կյանքում շատ քիքըն
են վայելել իրենց գործերի արդյունքները.
«Չի անցանեն կեանք մարդոյ որպէս շա-
մանդաղի»,— ասում է Ս. Գիրքը:

Քրիստոնեական համեստության, խոնար-
հության օրինակ էր նա, բոլորի հետ հայ-
րաբար և եղբայրաբար էր վարվում, նրա

դռները միշտ բաց էին բոլորի առաջ: Վարդագողության հիանալի տակտ ուներ Հանգույցալը մեծի և փոքրի հետ:

Ս. էջմիածնի գեղեցիկ երկնքի տակ, աստղագորդ գիշերներում, նստում էինք երկուսով: Խոսում էր Նա մեծ մարդարեների հատուկ տեսլապաշտությամբ Աստուծո, Ավետարանի, կրոնի փիլիսոփայության մասին հմտությամբ, գիտությամբ, կարդում էր ինձ մոտ աստվածաբանների գրքերից և բացատրում էր, պատմում իր անցյալ կյանքից, իր տեսած մարդկանց մասին, իր խոսած քարոզների մասին: Այդ օրերը իմ կյանքի ամենաերջանիկ և անմոռանալի օրերից էին:

Հանգույցալի հոգին ժլատ շէր, նրա սեղանը բաց էր միշտ՝ Հայր Աբրահամի անսպառ սեղանի նման: Ահա թե ինչո՞ւ հայ ժողովրդի ազգային-եկեղեցական սուգը բաժանում է ողջ աշխարհը:

Մահը ավելի ևս գեղեցկացրեց ամենքից սիրված և հարգված մեծ Հայրապետին: Նրա դագաղի շուրջն հավաքված էին կրոնականներ, մտավորականներ և բազմահազար ժողովուրդ... ու բոլորի հարգանքի և հրաժեշտի անկեղծ արցունքների միջով մեծ Կաթողիկոսի մարմինը ամփոփեցինք մայր հողի ծոցում, Մայր Եկեղեցու գրկում, Աշտարակեցու և Խրիմյանի կողքին....

Փա՛ռք Քո կենդանի հոգուն: Թո՛ղ Տերը պսակե Քեզ իր լուստ բնակարաններում. «Ի տան Հօր իմոյ օթևանք բազում են»: Մենք սրբությամբ կիրափործենք Քո թողած ավանդները և կաշխատենք միշտ վառ պահել Ս. Լուսավորչի կանթեղը:

Իմ աշաց լուս Վեհափա՛ռ, հավիտենական հանգիստ Քո անմահ հոգուն:

